### *Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Տ. Գեվորգ արքեպիսկոպոս Չեորեքչյանը հետեվյալ հեռագիրն է ուղարկել ՍՍՌՄ Ժողկոմսովետի նախագահ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ*

*Հյուսիսային Ամերիկայի Հայոց Թեմական Պատգամավորական ժողովը հեռագրով խնդրում է մեզ հետևյալը. «Հաղորդել մեր հիացմունքը ՍՏԱԼԻՆԻՆ, Միության իմաստուն առաջնորդին, որի անդուլ և արթուն ղեկավարության շնորհիվ Կարմիր Բանակը քաջության հրաշքներ է ցուցաբերում Հայրենիքի պաշտպանության գործում»:*

*Կատարելով մեր հոտի կամքը, երջանիկ եմ կրկին միացնելու և իմ անձնական ողջույնները հանդեպ Ձեզ տածած անկեղծ նվիրվածության, Թանկագին ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ, և իղձս տեսնելու Ձեր հետագա հաջողությունները թշնամուն մեր երկրից վտարելու և համայն մարդկության համար խաղաղություն և երջանկություն բերելու ջանքերում:*

*Մաղթում եմ Ամենաբարձրյալին, որ պարգևի Ձեզ արևշատություն և Հայրենիքին բարգավաճում:*

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

## «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԱՑՎԱԾ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր Տ. Տեղակալի կոչը հայ ժողովրդին՝ «Սասունցի Դավիթ» անունով տանկային շարասյուն կառուցելու նպատակով միջոցներ հանգանակելու մասին՝ ջերմ արձագանք է գտել տեղի և արտասահմանի հավատացյալների լայն շրջաններում: Այդ նպատակով գրեթե բոլոր թեմերում հավատացյալները կատարել են իրենց մուծումները: Արտասահմանի թեմերում հավաքված միջոցների մասին առ այժմ հետևյալ տեղեկությունները կան՝—*

*Նյու-Յորքից*—40,000 *դոլլար*,
*Երկրորդ անգամ Նյու-Յորքից* —20,000 *դոլլար*,
*Երրորդ անգամ Նյու-Յորքից* —10,600 *դոլլար*,
*Թավրիզից*—120,000 *ռյալ*,
*Սպահանից* —30,000 *թուման*,
*Ֆրեզնոյից (Կալիֆորնիա)*—10,000 *դոլլար*,
*Կիպրոսից* —3,000 *ֆունտ ստերլինգ*,
*Բեյրութից (Երախտապարտական միությունից)* —100 *ֆունտ ստերլինգ*,
*Ամերիկայից*—25,000 *դոլլար*:

*Ներկա ցուցակը, իհարկե, լրիվ չէ: Երկրորդ համարում կտպվի ինչպես հին, այնպես և նոր ստացված գումարների մանրամասն ցուցակը:*

---